# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 052-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07-Ը ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 07-ը մայիսի 2025 թվականի թիվ 5 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 07-ը մայիսի 2025 թվականի թիվ 5 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի ավագանու 15.01.2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխում կատարելու մասին:

3. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Բորիս Գասպարյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

5. Արենի համայնքի ավագանու 12 հուլիսի 2024 թվականի թիվ 097-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

6. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու մասին:

7. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, նախկին համայնքապետարանի վարչական շենքից առանձնացված հատվածը Հայաստանի Ամերիկյան Համալսարանին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին:

8. Արենի համայնքի <<Լիսա Գրիգորյանի անվան Արենիի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխելու և Արենի համայնքի ավագանու 2024թվականի հունիսի 6-ի թիվ 077-Լ որոշմամբ հաստատված կանոնադրությունը փոփոխելու մասին:

9. Արենի համայնքի 2026-2028թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը հաստատելու մասին:

10. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերին համաձայնություն տալու մասին:

11.Արենի համայնքի 2025 թվականի դպրոցների շրջանավարտներին գումար հատկացնելու մասին:

12. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**